



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ք. Երևան

05.09.2019թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ
ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/60**

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պաշտպանության նախարարություն
Բողոք բերող՝ «Տիգվան» ՍՊԸ

Մասնակցությամբ՝
«Տիգվան» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Ա. Պարանյանի, Հ. Ենգոյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ, զանազան
պահեստամասերի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ
քննող անձ)՝ քննության առնելով «Տիգվան» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից
09.08.2019թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և չեղյալ համարել հանձնաժողովի նիստի «Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ-ի հետ) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու թիվ 7 արձանագրության առ 01 օգոստոսի 2019թ. 1.2 կետով որոշմամբ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել 2019թ. օգոստոսի 1-ի թիվ 7 արձանագրության 1.3 կետով «Սլացք» ՓԲԸ-ի հետ սլայմանագիր կնքելու որոշումը:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 09.08.2019թ.-ին:

09.08.2019թ.-ին կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ և 16.08.2019թ.-ին և 29.08.2019թ.-ին նշանակվել են նիստեր:

Բողոքի քննությունն ավարտվել է 29.08.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 05.09.2019թ.-ին:

2. «Տիգվան» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Տիգվան» ՍՊԸ-ն ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Պարզվիրարություն իր կարիքների համար հայտարարել է ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հայտերի բացման օր է սահմանվել 15.05.2019թ.:

Ընթացակարգին հայտ է ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն (համալրեր գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ-ի հետ), «Տիգվան» ՍՊԸ-ն և «Ռիմկ-ավտո» ՍՊԸ-ն: Մրցույթային հանձնաժողովի 11.07.2019թ.ին ժամը 11.00-ին կայացած ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6-ի թիվ 4.2 որոշմամբ ընթացակարգի 1-ին

չափաբաժնում 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (համալսել գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ-ի հետ) և առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊԶԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Թիվ 7 արձանագրությամբ առ 19.07.2019թ.-ի «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊԶԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատել է «Սլացք» ՓԲԸ-ի (համալսել գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ-ի հետ) ուղարկված փաստաթղթերը պատշաճ և 1.3 կետով անգործություն ժամկետի ավարտից հետո հրավիրել պայմանագիր կնքելու:

Սակայն մենք ուսումնասիրելով «Սլացք» ՓԲԸ-ին (համալսել գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ -ի հետ) կողմից ներկայացրած որակավորման փաստաթղթերը գտնում ենք որ չի համապատասխանում հրավերի պահանջներին քանի որ.

1. Հաշիվ ապրանքագրերի վրա նշված չէ պայմանագրի ծածկագիրը և կնքման ամսաթիվը: Դրանից կարող ենք ենթադրել որ հաշիվ ապրանքագրերը դուրս են գրվել մինչև պայմանագրի կնքելը և նշված հաշիվ ապրանքագրերով կարող կնքված լինել մի քանի տարբեր ծածկագրով պայմանագրեր:

2. Թիվ 1 պայմանագրում հստակ նշված է պայմանագրի գինը 32 000 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե առավելագույն գումարը, բայց մատակարարվել է ընդհանուր 31 021 984 ՀՀ դրամի ապրանքներ, ստացվում է որ պայմանագիրը ամբողջությամբ կատարված չէ: Ինչպես նաև պայմանագրում հստակ նշված չէ ապրանքների անվանումը, մատակարարման ժամկետը, միավորի արժեքը և ընդհանուր ծավալը: Այսպիսով պարզ է դառնում, որ պայմանագիրը կազմվել և կնքվել բազմաթիվ թերություններով նախկինում դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա, այս մրցույթին մասնակցելու համար:

3. Պայմանագրերի ընդհանուր գումարը չի բավարարում մրցույթով անհրաժեշտ գումարի չափին:

Ուստի գտնում են, որ հանձնաժողովի գործողությունների ընթացքում խախտվել են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ, համաձայն որի Հայրերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված

պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:»:

Ի լրումն ներկայացրած բողոքի՝ Ընկերությունը հայտնել է, որ՝ «Ինչպես արդեն հայտնել էինք, ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար զանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթ:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն (համալեր գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) «Տիգվան» ՍՊԸ-ն և «Ռիմկավրո» ՍՊԸ-ն:

Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության թիվ 4.2 կետի համաձայն՝ ընթացակարգի 1-ին շափաքաժնում 1-ին տեր զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (համալեր գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ), որին առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Սլացք» ՓԲԸ-ի (համալեր գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ և «Սլացք» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրում կատարել հետևյալ շտկումները.

«Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի 50 տոկոսից: Անհրաժեշտ է լիարժեք ներկայացնել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պարշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

- Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի հաշիվ ապրանքագրերը և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրություն) ներկայացված են թերի: Հաշվի առնելով, որ ներկայացված պայմանագրերը կնքված են առավելագույն գումարով, և հնարավոր է այդ պայմանագրերի ոչ ամբողջ գումարի չափով կատարումը, ուստի անհրաժեշտ է ներկայացնել կամ բացակայող հաշիվ ապրանքագրերի և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները, կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատրված (սկանավորված) տարբերակը»:

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից (համարել գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) շտկված փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում գնահատող հանձնաժողովի 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատել է «Սլացք» ՓԲԸ-ի համարել գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) ուղարկված փաստաթղթերը որպես պարզաճ և սահմանել անգործության ժամկետ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները /անգործությունը/ և որոշումները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Գտնում ենք, որ «Սլացք» ՓԲԸ-ի կողմից (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) շտկված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը՝ «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշի մասով, չի համապատասխանել հրավերի պահանջներին և տվյալ մասնակցի հայտը ենթակա էր մերժման հետևյալ հիմնավորմամբ:

1. «Սլացք» ՓԲԸ-ի և Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի միջև կնքված համատեղ գործունեության պայմանագրի (կոնսորցիում) ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ համատեղ գործունեության պայմանագրով ամրագրված չէ, թե “Մասնագիտական

փորձառություն” որակավորման չափանիշը ապահովելու և/կամ ներկայացնելու պարտականությունը կոնսորցիումի մասնակից որ ընկերության վրա է դրված: Իսկ եթե կոնսորցիումի պայմանագրով նախատեսված չէ, թե “Մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը վերապահվել է գործընկեր 1-ին և գործընկեր 2-ին, ապա համատեղ գործունեության պայմանագրի տրամաբանությունից երկու մասնակիցներն էլ ունեն համապարտ պարտականություններ, այսինքն “Մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը պարտավոր էին ապահովել թե՛ «Սլացք» ՓԲԸ-ն և թե՛ Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն:

Մինչդեռ այս պարագայում ՀՀ ՊՆ-ի կողմից “Մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը հիմնավորելու համար փաստաթղթեր ներկայացնելու պահանջը դրվել է միայն Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի վրա, այսինքն «Սլացք» ՓԲԸ-ի կողմից փաստաթուղթ չի ներկայացվել, մինչդեռ համատեղ գործունեության պայմանագրով չի սահմանվել, որ “Մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը պարտավոր էր ապահովել միայն Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն:

Վերը նշված փաստը ապացուցվում է նաև նրանով, որ գնահատող հանձնաժողովի քարտուղարի կողմից փաստաթղթեր ներկայացնելու և շտկելու ծանուցումները ուղարկվել են «Սլացք» ՓԲԸ-ին, մինչդեռ՝ “մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշը ներկայացրել է Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն:

Ըստ երևույթի՝ ՀՀ ՊՆ-ին թյուրիմացության մեջ է գցել համատեղ գործունեության պայմանագրի 2-րդ կետը, որով սահմանված է հետևյալը.

«2. Կողմերը պարտավորվում են ներդնել հետևյալ ավանդները.

2.1. Գործընկեր 1՝ «Սլացք» ՓԲԸ-ն, տեխնիկական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ և ֆինանսական միջոցներ:

2.2. Գործընկեր 2՝ Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն, պահեստամասերի մատակարարում»:

Այսիսով, բողոքաբերը ենթադրում է, որ գնահատող հանձնաժողովի կողմից, ըստ երևույթի, “պահեստամասերի մատակարարումը” նույնացվել է “մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշի հետ, մինչդեռ ակնհայտ է, որ “պահեստամասերի մատակարարում” և “մասնագիտական փորձառություն” որակավորման չափանիշ հասկացությունների միջև առկա է 100% տարբերություն:

Համատեղ գործունեության պայմանագրի 2.2 կետից ուղղակիորեն հետևում է, որ այդ պայմանագրում, որպես ավանդ, Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն ներդնում է

պահեստամասերի մատակարարումը, այսինքն տվյալ ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու դեքայում պայմանագրով նախատեսված պարտավորությունը պետք է կատարի Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ն:

2. «Սլացք» ՓԲԸ-ի և Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի կողմից ներկայացված պայմանագրերի առարկայից, այսինքն պայմանագրի 1.1 կետից ընդհանրապես անհասկանալի է, թե կոնկրետ ինչ ապրանքներ պետք է մատակարարվեն որպես համանման ներկայացված պայմանագրերով /պայմանագրերում նշված է ընդամենը ընկերության կողմից արտատրված կամ գնված ապրանք/ և արդյոք այդ պայմանագրերը գնահատող հանձնաժողովը բավարար գնահատելով՝ գործել է իրավաչափ, քանի որ առնվազն այդ պայմանագրերը համանման գնահատելու համար անհրաժեշտ էր ուսումնասիրել պայմանագրին կից հավելվածը, որպեսզի հասկանալի լինի, թե ինչ ապրանք է մատակարարվել:

Այսպիսով գտնում ենք, որ որպես համանման ներկայացրած պայմանագրերը բավարար գնահատելու համար անհրաժեշտ էր, որպեսզի պայմանագրի առարկայից կամ պայմանագրի կից հավելվածից պարզ լիներ, որ խոսքը գնում է հրավերով որպես համանման սահմանված ապրանքների՝ հապատասխան պահեստամասերի ձեռքբերման մասին:

Այս պարագայում կարելի է մեջբերել բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կողմից կայացրած ԳԲԲԱ-ԼՕ-2019/10 գործով կայացրած որոշումը, որում գրեթե նույն փաստական հանգամանքներում բողոքներ քննող անձն արձանագրել է հետևյալը՝

«Կրիստալ Բլինինգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է 01.03.2019թ. Ընկերության և Արսեն Բարսեղյանի միջև կնքված առուվաճառքի պայմանագրի պատճեն, որի 1.1 կետի համաձայն՝ Ա.Բարսեղյանը պարտավորվում է «Կրիստալ Բլինինգ» ՍՊԸ-ին վաճառել ապրանքներ՝ սույն պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող թիվ 1 հավելվածով (այսուհետ՝ Հավելված) ապրանքը: Սակայն պայմանագրին կից չի ներկայացվել նշված Հավելվածը:

Նույն պայմանագրին կից նաև չի ներկայացվել որևէ հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, այն է՝ էլեկտրոնային հաշիվ, հանձման-ընդունման արձանագրություն, ավարտական ակտ կամ այլ փաստաթղթեր, որոնց առկայության պայմաններում ևս հնարավոր կլիներ փաստելու, որ պայմանագրի առարկան հանդիսացող ապրանքը (երը) հանձնվել է (են) գնորդին: Ընդ որում, վերը նշված փաստաթղթերի առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ պարզել, թե ինչպիսի ապրանք (ներ) է (են)

հանձնվել գնորդին, և արդյո՞ք դրանք համապատասխանում են Հրավերի 2.5 կետի 2 ենթակետի «գ» պարբերությամբ սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին, թե՞ ոչ:

Տվյալ դեպքում, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Հավելվածի բացակայության պայմաններում հնարավոր չէ պարզել պայմանագրի առարկան և քանակը, որոնց առկայության պայմաններում միայն հնարավոր կլիներ գնահատել «Կրիստալ Քլինինգ» ՍՊԸ-ի՝ հրավերով սահմանված «Տեխնիկական միջոցներ» որակավորման չափանիշին բավարարելու հանգամանքը...:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ արձանագրված անհամապատասխանության առկայության պարագայում մասնակցի հայտը չէր կարող գնահատվել բավարար և վերջինս չէր կարող ճանաչվել հաղթող մասնակից, քանի որ մասնակիցը չի բավարարել հրավերով սահմանված որակավորման չափանիշներին, չունի պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող համապատասխան տեխնիկական միջոցներ, իսկ նման պայմաններում Պատվիրատուի կողմից մասնակցի հայտը բավարար գնահատելու պարագայում խախտվել են Օրենքի 6-րդ, 34-րդ և Կարգի 48-րդ կետով սահմանված պահանջները:

Վերը նշված հանգամանքից հետևում է, որ եթե ներկայացված պայմանագրերից հնարավոր չէ պարզել, թե ինչ ապրանք է մատակարարվել նշված պայմանագրի շրջանակներում, այսինքն անհնար է պարզել պայմանագրի առարկան և մատակարարված ապրանքի քանակը՝ ուստի գնահատող հանձնաժողովը իրավունք չունի մասնակցի հայտը գնահատել բավարար:

3. Գտնում ենք, որ «Սլացք» ՓԲԸ-ի և Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Զ-ի /կոնսորցիում/ կողմից ներկայացված հաշիվ ապրանքագրերը չեն կարող գնահատվել /իդենտիֆիկացվել/ որպես համանման ներկայացված պայմանագրերի հիման վրա դուրս գրված հաշիվ-ապրանքագրեր: Նախ, պայմանագրերում նշված չեն, թե կոնկրետ ինչ ապրանքներ են մատակարարվում և ինչ ծավալներով, որով հնարավոր կլինի պարզել ներկայացված հաշիվ-ապրանքագրերի վերաբերելիությունը ներկայացված պայմանագրերին:

Բացի այդ, ներկայացված հաշիվ ապրանքագրերում լրացված չէ, թե որ պայմանագրի հիման վրա է դուրս գրված տվյալ հաշիվ-ապրանքագիրը /համապատասխան

դաշտում նշվում է պայմանագրի կնքման ամսաթիվը և հերթական համարը/ծածկագիրը/։ Վերոհիշյալ տեղեկատվության բացակայությունը նույնպես անհնարին է դարձնում հնարավորությունը գնահատել, թե ներկայացված հաշիվ ապրանքագրերը արդյոք հանդիսանում են որպես համանման ներկայացված պայմանագրերի հիման վրա դուրս գրված հաշիվ ապրանքագրեր, թե՛ ոչ։

Նման պայմանագրերի և հաշիվ ապրանքագրերի ուսումնասիրությունը թույլ է տալիս ենթադրելու, որ հաշիվ ապրանքագրերը դուրս են գրվել մինչև պայմանագիր կնքելը և նշված հաշիվ ապրանքագրերով կարող կնքված լինել մի քանի տարբեր ծածկագրով պայմանագրերի համար։

Ավելին՝ թիվ 1 պայմանագրում հստակ նշված է պայմանագրի գինը 32 000 000 ՀՀ դրամ, այլ ոչ թե առավելագույն գումարը, բայց մատակարարվել է ընդհանուր 31 021 984 ՀՀ դրամի ապրանքներ, ստացված է, որ պայմանագիրը կազմվել և կնքվել է բազմաթիվ թերություններով նախկինում դուրս գրված հաշիվ ապրանքագրերի հիման վրա՝ այս մրցույթի «մասնագիտական փորձառություն» որակավորման չափորոշիչը ապահովելու համար։

Իսկ արդեն մյուս պայմանագրով մատակարարվել է ընդհանուր 33 735 800 ՀՀ դրամի ապրանքներ և նորից ներկայացված հաշիվ ապրանքագրերում լրացված չէ, թե որ պայմանագրի հիման վրա է դուրս գրված տվյալ հաշիվ-ապրանքագիրը, որը նորից թույլ է տալիս ենթադրելու, որ հաշիվ ապրանքագրերը դուրս են գրվել մինչև պայմանագիր կնքելը և նշված հաշիվ ապրանքագրերով կարող կնքված լինել մի քանի տարբեր ծածկագրով պայմանագրերի համար։

Խնդրում ենք հաշվի առնել նաև այն կարևորագույն հանգամանքը, որ ներկայացված պայմանագրերի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ մատակարարված ապրանքների ընդհանուր գինը երկու պայմանագրերով կազմում է 64 757 784 ՀՀ դրամ, մինչդեռ Ընթացակարգի հրավերի Հավելված 1 տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի առավելագույն գումարը կազմում է 145 033 268 ՀՀ դրամ /կցվում է/։

Ընթացակարգի հրավերի 2.5 կետի ա ենթակետի համաձայն մասնակցին ներկայացվող՝

1) «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը սահմանվում և գնահատվում է հետևյալ կարգով՝

ա. մասնակիցը պետք է հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած լինի նմանատիպ առնվազն մեկ

պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանադիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ սույն ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի հիսուն տոկոսից: Ընդ որում առնվազն մեկ պայմանագրի շրջանակում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ պետք է պակաս չլինի սույն ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի քսան տոկոսից:

Այսիսով, ընթացակարգի շրջանակում, Հրավերի համաձայն, առավելագույն գումարը կազմում է 145 033 268 ՀՀ դրամ, իսկ Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Զ-ի կողմից ներկայացված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է 64 757 784 ՀՀ դրամ:

Հարգելի պարոն Օհանյան խնդրում ենք նկատի ունենալ, որ Ընթացակարգի հրավերի 2.5 կետի համաձայն՝ մասնակցի նմանադիպ պայմանագրերով մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի հիսուն տոկոսից: Հրավերի համաձայն՝ առավելագույն գումարը կազմում է 145 033 268 ՀՀ դրամ, այսինքն մասնակիցը պարտավոր է ներկայացնել այդ ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի հիսուն տոկոսի չափով համանման պայմանագրեր՝ ընդհանուր 72 516 634 ՀՀ դրամի: Իսկ ինչպես արդեն նշվեց, Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Զ-ի կողմից ներկայացված պայմանագրերի ընդհանուր գումարը կազմում է ընդամենը 64 757 784 ՀՀ դրամ: Ուստի այս պայմաններում երկրորդ փուլով ներկայացված որակավորման փաստաթղթերը՝ համանման պայմանագրերը, չպետք է գնահատվեն հրավերի պահանջներին համապատասխանող նաև այս հիմնավորմամբ:

4. Գնահատող հանձնաժողովի կողմից մասնակցից պահանջվել է ներկայացնել ներկայացված պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտադրված (սկանավորված) տարբերակը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ շտաբի արդյունքում 20.07.2019թ. ներկայացված գրությամբ՝ «Սլացք» ՓԲԸ-ի տնօրենի կողմից նշվել է՝ «Տեղեկացնում եմ Ձեզ, որ Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Զ-ի հետ 2016, 2017, 2018թթ. կնքված՝ մատակարարված պայմանագրերի շրջանակներում կատարված մատակարարումները Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Զ-ի կողմից կատարվել են բարեխիղճ՝ համաձայն «Սլացք» ՓԲԸ-ի կողմից ներկայացված ժամանակացույցի:

Այս մասով հայտնում ենք, որ այս գրությամբ չի հաստատվում, որ 2016, 2017, 2018 կնքված արդյոք բոլոր պայմանագրերն են կատարվել բարեխիղճ և համաձայն ժամանակույցի:»:

Ելնելով վերոգրյալներից, Բողոքներ քննող անձին Ընկերությունը ներկայացրած բողոքով խնդրել է պարտավորեցնել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից գանազան պահեստամասեր (Ինժեներական /ճանապարհաշինական/ տեխնիկայի վերանորոգման պահեստամասեր) ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովին դադարեցնել և չեղյալ համարել հանձնաժողովի նիստի «Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Կարապետյան ԱԶ-ի հետ) ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը մրցույթի հրավերի պահանջներին համապատասխան գնահատելու թիվ 7 արձանագրության առ 01 օգոստոսի 2019թ. 1.2 կետով որոշմամբ վերջիններիս հաղթող ճանաչված լինելու որոշումը և կասեցնել 2019թ. օգոստոսի 1-ի թիվ 7 արձանագրության 1.3 կետով «Սլացք» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքելու որոշումը:

3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը.

Բողոքներ քննող անձը 09.08.2019թ. գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու)՝ հնարավորություն տալով «Տիգվան» ՍՊԸ-ի կողմից 09.08.2019թ. ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 16.08.2019թ.-ին թիվ Մ-37253-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան Ձեր 09.08.2019թ. N ԲՔԱ-ԼՕ/2/13367-2019 գրության հայտնում եմ, որ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով գնման ընթացակարգում (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի կողմից 1-ին փուլի զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (այսուհետ՝ Մասնակից) և վերջինիս ծանուցվել է Ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը (այսուհետ՝ Փաստաթղթեր) ներկայացնելու վերաբերյալ: Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ

սահմանված ժամկետում Մասնակիցը ներկայացրել է Փաստաթղթերը, որոնք գնահատող հանձնաժողովի կողմից գնահատվել են բավարար:

2019 թվականի օգոստոսի 1-ին, հիմք ընդունելով գնահատող հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները, հանձնաժողովը որոշել է Մասնակցին ճանաչել որպես հաղթող (ընտրված):»:

4. ԳԲԲԱ-ԼՕ-2019/60 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

02.04.2019թ. ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարվել է զանազան պահեստամասերի ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊԶԲ-20/3» ծածկագրով ընթացակարգ (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) և հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 15.05.2019թ.:

Ընթացակարգին հայտ են ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի հետ), «Տիգվան» ՍՊԸ-ն և «Ռիմկ-ավտո» ՍՊԸ-ն:

«Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի հետ) (այսուհետ՝ նաև Կոնսորցիում) կողմից ներկայացված գնային առաջարկով առաջարկվել է պայմանագիրը կատարել 103 146 430.2 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիր Կոնսորցիումի կողմից ներկայացվել են թվով երկու պայմանագրեր.

1. «Սլացք» ՓԲԸ-ի և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 01.08.2016թ.-ին կնքված թիվ 1 մատակարարման պայմանագիր՝ 33 735 800 ՀՀ դրամ գումար ընդհանուր գումարային արտահայտությամբ.

2. «Սլացք» ՓԲԸ-ի և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 01.08.2017թ.-ին կնքված թիվ 1 մատակարարման պայմանագիր՝ 31 021 984 ՀՀ դրամ գումար ընդհանուր գումարային արտահայտությամբ:

20.07.2019թ.-ին «Սլացք» ՓԲԸ-ի կողմից տրված գրության համաձայն՝ «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ն բարեխղճորեն է կատարել 2016թ., 2017թ. և 2018թ.-ի մատակարարման պայմանագրերը:

Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության թիվ 4.2 կետի համաձայն՝ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի հետ), որին առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատասխանություններ և «Սլացք» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրում կատարել հետևյալ շտկումները.

«Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանապիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի 50 տոկոսից: Անհրաժեշտ է լիարժեք ներկայացնել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանապիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտադրված (սկանավորված) տարբերակը:

Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանապիպ պայմանագրերի հաշիվ ապրանքագրերը և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրություն) ներկայացված են թերի: Հաշվի առնելով, որ ներկայացված պայմանագրերը կնքված են առավելագույն գումարով, և հնարավոր է այդ պայմանագրերի ոչ ամբողջ գումարի չափով կատարումը, ուստի անհրաժեշտ է ներկայացնել կամ բացակայող հաշիվ ապրանքագրերի և սահմանված ժամկետում

կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները, կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:»:

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) շտկված փաստաթղթեր ներկայացնելու արդյունքում գնահատող հանձնաժողովի 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատել է «Սլացք» ՓԲԸ-ի համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) ուղարկված փաստաթղթերը որպես պատշաճ և սահմանել անգործության ժամկետ:

5. Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացությանը, որ «Տիգվան» ՍՊԸ-ի կողմից 09.08.2019թ. ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1026-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ համատեղ գործունեության պայմանագրով երկու կամ ավելի անձինք (մասնակիցները) պարտավորվում են միացնել իրենց ավանդները և առանց իրավաբանական անձ կազմավորելու գործել համատեղ՝ շահույթ ստանալու կամ օրենքին չհակասող այլ նպատակի հասնելու համար:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1032-րդ հոդվածի համաձայն՝ եթե համատեղ գործունեության պայմանագիրը կապված չէ դրա մասնակիցների ձեռնարկատիրական գործունեության հետ, յուրաքանչյուր մասնակից ընդհանուր պայմանագրային պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իր ամբողջ գույքով՝ ընդհանուր գործում իր ավանդի արժեքին համամասնորեն: Պայմանագրից չծագած ընդհանուր պարտավորություններով մասնակիցները կրում են համապարտ պատասխանատվություն: Եթե համատեղ գործունեության պայմանագիրը կապված է դրա մասնակիցների կողմից ձեռնարկատիրական գործունեության հետ, ապա մասնակիցները

համապարտ պատասխանատվություն են կրում բոլոր ընդհանուր պարտավորությունների համար՝ անկախ դրանց ծագման հիմքերից:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնակիցները կարող են գնման գործընթացին մասնակցել համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով): Համատեղ գործունեության կարգով գնումների գործընթացին մասնակցության կարգը սահմանվում է հրավերով: Նման դեպքում՝

- 1) հայտը ներառում է նաև համատեղ գործունեության պայմանագիր.
- 2) հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները.
- 3) մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն.
- 4) համատեղ գործունեության պայմանագրի կողմը (կողմերը) չի (չեն) կարող նույն ընթացակարգին ներկայացնել առանձին հայտ (հայտեր):

Սույն դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊԶԲ-20/3» ծածկագրով ընթացակարգին «Սլացք» ՍՊԸ-ն և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Զ-ն հանդես են եկել համատեղ գործունեության պայմանագրով (կոնսորցիում), ուստի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն, հիմք ընդունելով Օրենքի 30-րդ հոդվածի 6-րդ մասի 3-րդ ենթակետը: Իսկ արդեն 2-րդ ենթակետի համաձայն՝ հայտի գնահատման ժամանակ հաշվի են առնվում համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումները:

Այլ կերպ ասած՝ հայտը գնահատվում է համատեղ գործունեության պայմանագրի բոլոր անդամների միասնական որակավորումների հաշվառմամբ և Օրենքի ուժով կրելով համատեղ և համապարտ պատասխանատվություն՝ էական չէ, թե պայմանագրի կողմերից կոնկրետ ում կողմից է ներկայացվում այն:

Ավելին՝ համատեղ գործունեության պայմանագիրը կարգավորում է պայմանագրի կողմերի՝ իրենց միջև առկա կամ ապագայում առաջացող իրավունքներն ու պարտականությունները, իսկ երրորդ անձանց հանդեպ նրանք հանդես են գալիս համատեղ՝ ընդհանուր պարտավորություններով կրելով համապարտ պատասխանատվություն:

Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝

1) մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը.

2) մասնագիտական փորձառություն.

3) տեխնիկական միջոցներ.

4) ֆինանսական միջոցներ:

5) աշխատանքային ռեսուրսներ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո ոչ ուշ քան հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 46-րդ կետի համաձայն՝ սույն կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով նախատեսված ժամկետի ավարտին հաջորդող աշխատանքային օրը քարտուղարն էլեկտրոնային եղանակով հանձնաժողովի անդամներին միաժամանակ տրամադրում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկուական օրինակ և կոմիտեից ստացված տեղեկատվությունը: Հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրվում է ոչ ուշ, քան փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Ընդ որում, ապրանքների գնման դեպքում հանձնաժողովը գնահատում է նաև ներկայացված տեխնիկական բնութագրերի համապատասխանությունը հրավերի պահանջներին, իսկ անհամապատասխանություն

արձանագրելու դեպքում հանձնաժողովի նիստի արձանագրության մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը...:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Վերոնշյալ իրավակարգավորումների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն հետևության, որ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին՝ ունենալով պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական գործունեության համապատասխանություն պայմանագրով նախատեսված գործունեությանը, մասնագիտական փորձառություն, տեխնիկական միջոցներ, ֆինանսական միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, որոնց առկայության (համապատասխանության) դեպքում է հնարավոր հայտը գնահատել հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Այն դեպքում, երբ հայտերի բացման նիստի ավարտից հետո էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցված առաջին տեղն զբաղեցրած մասնակցի ներկայացրած որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացվել են ոչ ամբողջական կամ դրանց գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ արձանագրվել են անհամապատասխանություններ, ապա հանձնաժողովի քարտուղարը

կրկին անգամ էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից:

2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 61-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Վերոնշյալ նորմերի համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ մասնակիցների «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատելու համար մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:

Ընդ որում նախկինում կատարված պայմանագիրը գնահատվում է նմանատիպ, եթե դրա շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ

գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ Կարգի 61-րդ կետի դիսպոզիցիայից (բովանդակությունից) ուղղակի հետևում է, որ «նմանատիպ պայմանագիր» եզրույթն իրենից ներկայացնում է երեք կարևոր միաժամանակյա վավերապայմանների առկայություն, դրանք են՝

1. Պայմանագիրը պետք է կատարված լինի հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում,

2. Պետք է կատարված լինի պատշաճ ձևով,

3. Գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից և առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, չպետք է պակաս լինի տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

02.04.2019թ.-ին ՀՀ ՊՆ կարիքների համար հայտարարված զանազան պահեստամասերի ձեռքբերման «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով ընթացակարգին հայտ են ներկայացրել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի հետ) «Տիգվան» ՍՊԸ-ն և «Ռիմկավտո» ՍՊԸ-ն:

Բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 11.07.2019թ. ժամը 11:00-ին տեղի ունեցած նիստի թիվ 6 արձանագրության թիվ 4.2 կետի համաձայն՝ ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի հետ), որին առաջարկվել է ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը և առաջարկված ապրանքի ամբողջական նկարագիրը:

«Սլացք» ՓԲԸ-ի (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերում գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել են անհամապատաս-

խանութները և «Սլացք» ՓԲԸ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկված ծանուցմամբ առաջարկվել է մեկ աշխատանքային օրում կատարել հետևյալ շտկումները.

«Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի ընդհանուր գումարը պակաս է ընթացակարգի շրջանակում առավելագույն գումարի 50 տոկոսից: Անհրաժեշտ է լիարժեք ներկայացնել հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագրի և դրա հաշիվ ապրանքագրերի պատճենները, ինչպես նաև այդ պայմանագրի (պայմանագրերի) սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:

Ձեր կողմից ներկայացված հրավերով նախատեսված «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող նմանատիպ պայմանագրերի հաշիվ ապրանքագրերը և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերը (հանձման-ընդունման արձանագրություն) ներկայացված են թերի: Հաշվի առնելով, որ ներկայացված պայմանագրերը կնքված են առավելագույն գումարով, և հնարավոր է այդ պայմանագրերի ոչ ամբողջ գումարի չափով կատարումը, ուստի անհրաժեշտ է ներկայացնել կամ բացակայող հաշիվ ապրանքագրերի և սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձման-ընդունման արձանագրություն) պատճենները, կամ տվյալ պայմանագրերի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստման բնօրինակից արտատպված (սկանավորված) տարբերակը:»:

«Սլացք» ՓԲԸ-ի կողմից (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) Սամվել Տեր-Գրիգորյան Ա/Ձ-ի հետ) շտկված փաստաթղթերը ներկայացնելու արդյունքում գնահատող հանձնաժողովի 19.07.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 7 արձանագրության համաձայն՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԲՄԱՊՁԲ-20/3» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովը գնահատել է ուղարկված փաստաթղթերը որպես պատշաճ և սահմանել անգործության ժամկետ:

Կոնսորցիումի կողմից ներկայացված գնային առաջարկով առաջարկվել է պայմանագիրը կատարել 103 146 430.2 ՀՀ դրամ ընդհանուր գնով:

Որպես հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրած համանման (նմանատիպ) պայմանագիր Կոնսորցիումի կողմից ներկայացվել են թվով երկու պայմանագրեր՝

1. «Սլացք» ՓԲԸ-ի և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 01.08.2016թ.-ին կնքված թիվ 1 մատակարարման պայմանագիր՝ 33 735 800 ՀՀ դրամ գումար ընդհանուր գումարային արտահայտությամբ.

2. «Սլացք» ՓԲԸ-ի և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 01.08.2017թ.-ին կնքված թիվ 1 մատակարարման պայմանագիր՝ 31 021 984 ՀՀ դրամ գումար ընդհանուր գումարային արտահայտությամբ:

«Սլացք» ՓԲԸ-ի և «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի միջև 2016թ.-ին և 2017թ.-ին կնքված մատակարարման պայմանագրերի գումարը ($33\,735\,800 + 31\,021\,984 = 64\,757\,784$ ՀՀ դրամ) ընդհանուր գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի՝ 103 146 430.2 ՀՀ դրամ ընդհանուր գնի հիսուն տոկոսից ($51\,573\,215.1$ ՀՀ դրամ), իսկ առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից ($20\,629\,286$ ՀՀ դրամ):

20.07.2019թ.-ին «Սլացք» ՓԲԸ-ի կողմից տրված գրության համաձայն՝ «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ն բարեխղճորեն է կատարել 2016թ., 2017թ. և 2018թ.-ի մատակարարման պայմանագրերը:

Գործում առկա 2016թ.-ի և 2017թ.-ի մատակարարման պայմանագրերի կից ներկայացված հարկային հաշիվների հիման վրա, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում և փաստում, որ դրանցից հստակ երևում է, թե ինչպիսի ապրանքներ են հանձնվել «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Ձ-ի կողմից «Սլացք» ՓԲԸ-ին: Ուստի բողոքաբերի կողմից մատնանշված ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի կայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/10 որոշման մեկնաբանությունները սույն դեպքում կիրառելի չեն, քանի որ առկա է հաշվապահական հաշվառման փաստաթուղթ, այն է՝ էլեկտրոնային հաշիվ, որի պայմաններում հնարավոր է փաստել, որ համանման (նմանատիպ) հանդիսացող 2016թ.-ի և 2017թ.-ի մատակարարման պայմանագրերի առարկան հանդիսացող ապրանքները հանձնվել են գնորդին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Սլացք» ՓԲԸ-ն (համատեղ գործունեության կարգով (կոնսորցիումով) «Սամվել Տեր-Գրիգորյան» Ա/Զ-ի հետ) Պատվիրատուի կողմից սահմանված շտկման ժամանակահատվածում, ներկայացնելով իրեն ներկայացված պահանջների համապատասխանության հիմնավորման նպատակով անհրաժեշտ փաստաթղթեր բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և Հրավերի 2.5 կետով սահմանված պահանջներին, իսկ Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Ուստի նման պայմաններում, «Տիգվան» ՍՊԸ-ի կողմից 09.08.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/60 բողոքն անհիմն է և ենթակա մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Տիգվան» ՍՊԸ-ի կողմից 09.08.2019թ.-ին ներկայացված թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2019/60 բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

**ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝**

**ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**